

«ՄԱՅՐԵՆԻԻ ՊԱՇՏՊԱՆ» ԸՄՐԵՅ

# ԱՅՍՕՐՎԱՆԻՑ ՀԱՆՁՆՈ՛ՒՄ ԵՍ ՔԵԶ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ ՀԱԶԱՐԱԳԱՆՁ



Դոնի Ռոստովի թիվ 83 դպրոցի հայոց լեզվի «Արևիկ» խմբակի սաները (Ուսուցչուհի Մոնա Կարապետյան):

## ՊԱՇՏՊՈՒ ՊԱՇՏՊԱՆԵՐ ՄԱՅՐԵՆԻՆ

Ճակատագիրը մեզ՝ հայերիս ցրեց աշխարհով մեկ: Լինելով բնատուր ընդունակություններով օժտված՝ հայ մարդը ցանկացած երկրում շատ արագ յուրացնում է տեղի լեզուն, միաժամանակ մշտապես հոգ տանելով պահպանում իր մայրենի լեզուն, սովորությունները:

Դոնի համայնքում (և ոչ միայն) հայոց լեզուն դասավանդվում է՝ որպես օտար լեզու: Այդ է պատճառը, որ Ռուսաստանում դասավանդող շնորհաշատ ուսուցիչների կողմից (Երազիկ Հարությունյան, Կարինե Կատանյան, Կարինե Նսայան) ստեղծվեցին ռուսախոս երեխաների համար հայոց լեզվի դասագրքեր, այբբենարաններ («Փոքր

Հայկ», «Փոքր Միեր», «Մասունցի Դավիթ», «Մեծ Միեր» և այլն):

Այսօր, արդեն, երբ մեկնարկել է 2019-2020 թթ ուսումնական տարին մեր համայնքում, հայոց լեզվի բոլոր կիրականորյա և ֆակուլտատիվ խմբակները ապահովված են նոր դասագրքերով:

Ծնողների կողմից մեծ ակտիվություն է նկատվում երեխաներին հայեցի կրթություն և դաստիարակելու գործում, քանզի այս գործի նվիրյալ դեսպանների, հայոց լեզվի սիրված ուսուցիչների (Մոնա Կարապետյան, Լուսինե Պետանյան, Արմինե Վարդանյան, Արմինե Հովսեփյան, Ջոյա Վարդանյան, Ռուզաննա Կարապետյան) կողմից հայ մանուկները ստանում են հայրենասիրական առողջ դաստիարակություն, սեր՝ Հայաստան հայրենիքի, նրա լեզվի, մշակույթի և արվեստի հանդեպ: Ծանոթանում են երկրի աշխարհագրությանը, սովորություններին, ծեսերին, չքնաղ բնությանը, սովորում են գնահատել գեղեցիկն ու օգտակարը, պահպանել իրենց անհատականությունն ու լինել բարի, գեղեցիկ, առաքինի քաղաքացիներ:



Տվեք մեզ լավ ուսուցիչներ, կտանք ձեզ հայրենասեր քաղաքացիներ:

Շնորհավորելով մեր մանուկներին ու ծնողներին նոր ուսումնական տարվա մեկնարկի առթիվ՝ միաժամանակ շնորհավորում ենք հայոց լեզվի ուսուցիչներին,

պարի ու գործիքային խմբերի ուսուցիչներին՝ իրենց մասնագիտական տոնի առթիվ:

## ՖԵՅՍՐՈՒՔՅԱՆ ԼՐԱՀՈՍԻՑ

# ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ՈՒՍՈՒՑԳԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Շնորհավորում են Ռուսոցի օրը, ամուր գրկում և ջերմ համբուրում են բոլորիդ, մայրենիի անխոնջ և անշահ դեսպաններ: Մա այն մասնագիտությունն է, ուր նյութական շահը ամբողջովին տեղի

Ազգային իղձերի իրականացման գործում մեր գիտելիքն ու վարպետությունը, ստեղծագործական ունակությունն ու կենսափորձը, ինչպես նաև հոգատարությունն ու ներդրումությունը խիստ անհրաժեշտ



Դոնի Ռոստովի թիվ 61 դպրոցի հայոց լեզվի «Արևիկ» խմբակի սաները (Ուսուցչուհի Արմինե Հովսեփյան):



Միբելի՛ ուսուցիչներ, ողջունում և շնորհավորում են ձեզ ուսուցչի տոնի առթիվ: Մասնագիտական ցանկացած տոն հրաշալի առիթ է նաև խմաստավորելու արածը և մտորելու անելիքների մասին: Տոնը

է տալիս հոգեկան նախանձախնդրության և գաղափարական սկզբունքայնության առջև, ուր ամեն ինչ որոշում են նվիրումն ու հոգու ջերմությունը: Անսպառ եռանդ և անբիծ լույս ձեզ:

Ես սիրում եմ կրկնել, որ վարժապետը վարժեցնում է, դասատուն դաս է տալիս, իսկ ուսուցիչը ուսուցանում է: Մի գիտելիք ուսուցանելու համար, անհրաժեշտ է հազար ու մեկը ունենալ, այլապես այս կրեատիվ դարում մեր հետևից շատ քչերը կգան:

Փող միշտ բազմամարդ լինեն ձեր դասարանները, անցողիկ՝ ձեր հոգսերը և մնայուն՝ ձեր հեղինակությունը:

**Երազիկ ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ**  
«Փոքր Միեր», «Մեծ Միեր»  
դասագրքերի հեղինակ

Հայոց լեզվի, հայ մշակույթի ուսուցիչ, քեզ իմ խորին խոնարհումը: Դու հայրենյաց սիրո բանակի չգորացրվող զինվոր տանը, թե՛ դրսում:

**Մոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Միբելի՛ գործընկերներ, հարգելի՛ ուսուցիչներ, շնորհավորում են մեզ մեր մասնագիտական տոնի առթիվ:

**Լուսինե ՊԵՏԱՆՅԱՆ**

**Արմինե ՀՈՎՍԵՓՅԱՆ**



Դոնի Ռոստովի թիվ 19 գիմնազիայի հայոց լեզվի «Արևիկ» խմբակի սաները (Ուսուցչուհի Լուսինե Պետանյան):

են նոր մարտահրավերներին դիմագրավելու ու այս փորձրկահույզ կյանքի ընթացքի մեջ մեր սաների հայ դիմագիծը պահպանելու դժվարին ու պարտավորեցնող գործում:

Մասնաձևակի շնորհավորում են վաստակած հանգստի անցած մեր ավագ սերնդի մանկավարժներին, իմ սիրելի մայրիկին, ովքեր շարունակում են խորհուրդներով և բազմամյա փորձով իրենց նպաստը բերել մեր ընդհանուր գործին:

մեզ բոլորիս հնարավորություն է տալիս գնահատելու անցած ուղին և նախանշելու այն ճանապարհը, որը կապահովի մեր ազգի զարթոնքը լինի հայրենիքում, թե՛ նրա սահմաններից դուրս: Համոզված եմ, որ մեր դպրոցներում պետք է թագավորի չորս պաշտամունք՝ հայրենիքի, մայրենիքի, մարդու, զրքի:

Եվս մեկ անգամ շնորհավորում են բոլորիս և մաղթում հաջողություններ մեր նվիրական գործում:

**ВНИМАНИЕ!**  
**ТРЕБУЕТСЯ ПОМОЩЬ**

**УВАЖАЕМЫЕ ЧИТАТЕЛИ!**  
НАШЕЙ СООТЕЧЕСТВЕННИЦЕ НАИРЕ АСАТУРОВНЕ МОЗГИНОЙ, ИНВАЛИДУ I ГРУППЫ, СРОЧНО ТРЕБУЕТСЯ ПОМОЩЬ.  
У НАИРЫ ОЧЕНЬ СЕРЬЕЗНОЕ ЗАБОЛЕВАНИЕ.  
ОСНОВНОЙ ДИАГНОЗ — САХАРНЫЙ ДИАБЕТ ПЕРВОГО ТИПА, ДЕКОМПЕНСАЦИЯ, ДИАБЕТИЧЕСКАЯ НЕФРОПАТИЯ 3-Я СТАДИЯ, ПРОГРАММНЫЙ ГЕМОДИАЛИЗ, ПРОЛИФЕРАТИВНАЯ ДИАБЕТИЧЕСКАЯ РЕТИНОПАТИЯ, ГИПЕРТОНИЧЕСКАЯ АНГИОПАТИЯ СЕЧАТКИ, ОСЛОЖНЕННАЯ КАТАРАКТА ОБОИХ ГЛАЗ, ДИАБЕТИЧЕСКАЯ ДИСТОНАЛЬНАЯ ПОЛИНЕЙРОПАТИЯ НИЖНИХ КОНЕЧНОСТЕЙ, СЕНСОМОТОРНАЯ ФОРМА.  
ПРОСИМ ВСЕХ НЕРАВНОДУШНЫХ ЛЮДЕЙ НЕ ОСТАВАТЬСЯ В СТОРОНЕ И НЕ ПРОХОДИТЬ МИМО ЧУЖОЙ БЕДЫ!  
ПРОТЯНИТЕ РУКУ ПОМОЩИ!  
ВМЕСТЕ МЫ СПАСЕМ ЖИЗНЬ!  
ЖЕЛАЮЩИМ ОКАЗАТЬ ПОМОЩЬ  
ОБРАЩАТЬСЯ ПО  
ТЕЛ. +7 (960) 454-70-16,  
ВЛАДИМИР ГЕОРГИЕВИЧ СЛАСТЕНОВ